ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա—Հաղթական ճակատամարտեր

Առարկա—Նախնական զինվորական պատրաստություն

Կատարող—Գևորգ Բդոյան

Ղեկավար--- Գևորգ Բդոյան

Ստեփանավան --2023

ՑԱՆԿ

	ՑԱՆԿ	էջ
1.	Ցանկ	1
2.	Ներածություն	2
3.	Հայոց Ձորի ճակատամրտը	3
4.	Արածանի ճակատամրտը	4
5.	Ձիրավի ճակատամրտը	5
6.	Ավարայրի ճակատամրտը	6
7.	Սևանի ճակատամրտը	7
8.	Հաշիձորի ճակատամրտը	8
9.	Սարդարապատի ճակատամրտը	9
10.	Բաշ Ապարանի ճակատամրտը	10
11.	Ղարաքիլիսայի ճակատամրտը	10
12.	Արցախյան պատերազմ	11
13.	Ապրիլյան քառօրյա	13
14.	44 օրյա պատերազմ	15
15.	Վերջաբան	16
16.	Գրականություն	17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց 5 հազարամյա պատմության մեջ պահպանվել են բազմաթիվ փաստեր որոնք վկայում են, որ մեր նախնիները ունեցել են զենքի պաշտամունք և հարգանք զինվորականության հանդեպ: Հայ ժողովուրդը գիտակցել է , որ միայն զենքի և արհեստավարժ զինվորականի օգնությամբ է հնարավոր ժողովրդի և հայրենիքի պաշտպանությունը: Հայ ժողովուրդը իր պատմության ընթացքում ունեցել է փառավոր հաղթանակներ և ավաղ նաև դառը պարտություններ, սակայն եղել են ճակատամարտեր որոնք բախտորոշ նշանակություն են ունեցել ազգի գոյատևման և պահպանման համար:

Սույն հետազոտական աշխատանքում համեմատություններ կանցկացնենք Հայկ Նահապետից մինչև մեր օրերի՝ քառօրյա և 44-օրյա հայ ժողովրդի գոյատևման համար պայքարի մարտավարության, հայ զինվորի ոգու, արիության, հայրենի հողի հանդեպ իր ունեցած պարտքի ու զգացմունքի մասին:

Հիմնական մաս

1. Հայոց Ձորի ճակատամարտը

Հայ ժողովուրդն իր պատմությունը սկսում է Հայոց Ձորի ճակատամարտում Բաբելոնի տիրակալ Տիտանյան Բելի զորքերի դեմ Հայկ Նահապետի տարած Հայթանակով: Այն մեզ հայտնի է պատմահայր Մովսես Խորենացու «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԵ «Հայկ և Բելե վիպասքից, որն այսօր էլ հայ ժողովրդի ինքնաճանաչման կարևոր խթաններից է:

Հայկ Նահապետը, չկամենալով ենթարկվել Տիտանյան Բելին, իր որդիների հետ հեռանում է հյուսիս՝ իր հայրենի երկիր: Բելն իր որդու գլխավորությամբ պատվիրակություն է ուղարկում Հայկի մոտ, առաջարկում վերադառնալ ու հնազանդվել իրեն, սակայն, վճռական մերժում ստանալով, մեծ բանակով արշավում է Հայկի դեմ; Հայկը հավաքում է իր որդիների ու թոռներին, քաջ և աղեղնավոր այրերին և իր ձեռքի տակ եղած այլոց ու հասնում Վանա ծովի ափը:

Վճռական ճակատամարտը տեղի է ունենում Վարագա լեռան ու Վանա լճի միջև եղած տարածքում՝ Հայոց Ձոր գետի աջ ափին: Հայկի շարած սեպաձև մարտակարգի կենտրոնը մխրճվում է Բելի զորքերի մեջ: Այդ ժամանակ էլ Հայկը իր լայնալիճ աղեղը լարում ու եռաթև նետով գետին է տապալում բռնակալին: Բելի մեծաթիվ բանակը սարսափած ցրվում է :

Հայկի գործողությունները համապատասխանում էին մարտավարական իրավիճակին: Հայկն իր զորքի մարտակարգը շարում էր հակառակորդի թույլ կողմերը հաշվի առնելով: Հայկական ուժերը կարգելով եռանկյունի ձևով՝ Հայկը իր վրա է վերցնում կենտրոնական անմիջական հրամանատարությունը, աջ զորաթևը հանձնում իր որդիներին՝ Արամանյակի գլխավորությամբ, ձախ թևը՝ թոռներին՝ Կադմոսի գլխավորությամբ, որովհետև «աղեղ ու սուր գործածելու մեջ կորովի մարդիկ էին ե : Իսկ մյուս բազմությունները կանգնում էին հետևում՝ կազմել սեպաձև մարտակարգ:

Հայկը, որպես զորավար, Ալեքսանդրից, Հանիբալից և Կեսարից առաջ կարևորում էր.

1.ճակատամարտում գլխավոր հարվածի ճիշտ ընտրությունը

2.հարվածի հուժկու, սրընթաց,վճռական լինելու անհրաժեշտությունը

3.անընդմեջ հետախուզության նշանակությունը

Այդպիսի մարտավարությունն ապահովեց հաղթանակը թվական գերակշռություն ունեցող հակառակորդի հանդեպ;

2.Արածանի ճակատամարտ

Տիգրանակերտի ճակատամարտն ու մայրաքաղաքի անկումը չկոտրեցին հայոց թագավորի կորովը: Տիգրան Բ-ն իր մեջ ուժ գտավ պայքարը շարունակելու: Նա չէր պատրաստվում ընկրկել հռոմեական բիրտ ուժի դիմաց: Լուկուլլոսը՝ ռազմական գործողությունները համարելով ավարտված, բանակը տարավ ձմեռելու Կորդուքի տաք շրջաններ: Օգտվելով դրանից՝ Տիգրան Մեծն անմիջապես օգտագործեց դադարը և սկսեց եռանդուն նախապատրաստվել ապագա ռազմական գործողություններին: Ձմեռվա ամիսներին նա վերակառուցեց բանակը, որի հարվածային գլխավոր ուժը դարձավ հեծելազորը:

Այլևս հույսը կորցնելով, թե Տիգրանը հաշտություն կխնդրի իրենից, Ք. ա. 68 թ. գարնան վերջերին Լուկուլլոսը դուրս եկավ Կորդուքից և բռնեց Արտաշատ տանող ճանապարհը: Նա համոզված էր, որ Տիգրանին պարտադրելով նոր ճակատամարտ, ինքը գլխովին կոչնչացնի հայկական բանակը և հեշտությամբ կգրավի Արտաշատը: Հայկական բանակը, սակայն, խուսափում էր գլխավոր ճակատամարտից և դանդաղորեն նահանջում էր երկրի խորքերը: Միաժամանակ անսպասելի, այդ թվում գիշերային հանդուգն հարձակումներով հայերը ջլատում էին հռոմեացիների ուժերը՝ նրանց նշանակալից կորուստներ պատճառելով: Տիգրանի ընտրած այս մարտավարությունը լիովին արդարացրեց իրեն: Լուկուլլոսի հյուծված և մարտունակությունը կորցրած բանակը միայն սեպտեմբերի 22-ին հասավ Արածանիի գետանցին: Առջևում Հայկական Պար լեռնաշղթան էր, իսկ նրանից քիչ այն կողմ՝ Արտաշատն իր անբավ հարստություններով: Շուտով հռոմեական բանակը ենթարկվեց հայկական զինված ուժերի շեշտակի գրոհին, որը գլխավորում էր հայոց աննկուն ու եռանդով լի արքայից արքան: Հռոմեական բանակը լիակատար պարտություն կրեց: Արածանիի ճակատամարտը ցույց տվեց Տիգրանի՝ որպես հիանալի ռազմագետի, կարողությունները: Անպարտելի համարվող հռոմեական բանակը ծանր պարտություն

կրեց, դրան հետևեց նրա խայտառակ փախուստը: Լուկուլլոսն ստիպված էր թողնել Հայաստանի սահմանները: Տիգրան Մեծի հանձնարարությամբ Միհրդատ Եվպատորը հայկական մի զորամասով անցավ Պոնտոս և սկսեց երկրի ազատագրումը:

Տիրան Մեծի հաղթանակին նպաստեցին

1. Զմեռային դաղարը լավագույն ձևով օգտագործելը
2. Թշնամու մշտական հետախուզումը
3. Հանկարծակի հարվածները թշնամու երթի ժամանակ
4. Խաբուսիկ մարտավարական հնարքները

Մովսես Խորենացին Տիգրան Մեծի մասին ասել է "Տիգրանը մեր թագավորներից ամենահզորն ու խոհեմն էր և նրանցից ամենաքաջը: Մեր բնակության սահմաններն ընդարձակելով, հասցրեց մինչև հին բնակության ծայրագույն սահմանները: Նա այրերի գլուխ անցնելով և արիություն ցուցաբերելով, բարձրացրեց մեր ազգը և լծի տակ գտնվողներին կարգեց շատերի վրա լծադիր և հարկապահանջ: Բազմացրեց պաշարները ոսկու և արծաթի, խազաղություն ու շենություն բերեց, լիացրեց բոլորին:

3. Ձիրավի ճակատամարտը

Ձիրավի դաշտը գտնվում է Արածանի գետի ափին, որտեղ էլ 371 թվականին տեղի է ունեցել ճակատամարտ հայերի ու պարսիկների միջև: Թագավորը Պապն էր:

Առաջին իսկ ժամին պարզվեց, որ պարսից ճնշումը ուժեղ է. Նրանք թե՛ մեծաթիվ են, թե՛ ավելի վարժ. Կռվում էին ավելի սառնասիրտ ու առաջանում էին հաստատուն:

Հայերը սկսեցին նահանջել, շուտով անցան հետ անցան գետը: Պարսիկները տեսնելով հայերի նահանջը, գրոհեցին: Պապն ու մյուսները զարմանում էին, թե ինչպե՞ս Մուշեղը պարսիկների առաջին հարվածից հետո ցանկացավ հանձնվել: Սակայն դա այդպես չէր: Ըստ Մուշեղի ծրագրի, հայերը պետք է հետ նահանջեին, պարսից զորքին հնարավորինս քաշեն հայոց կողմը, որպեսզի հետո նորից հարձակվեին, իսկ Կամսարական իշխանի ու Սմբատ ասպետի զորքերը ետնից պետք է գրոհեին:

Հանկարծ Պարսկաստանի լեռներից եկող զորքեր երևացին: Պապը անհանգստանու էր, որ դրանք պարսից օգնական զորքեր են: Սակայն իրականում Սմբատ Բագրատունու և

Սպանդարատ Կամսարականի գնդերն էին: Շուտով այդ զորքերը իջան լեռներից: Պարսից զորքը շրջափակված էր: Սկսվեց խուճապ և անկանոն նահանջ, որը վերածվեց փախուստի:

Մուշեղ Մամիկոնյանի մարտավարական հնարքները

1. Ծանրազեն հետևակի հարձակման նախապատրաստություն՝ հարձակումը սկսելով թեթևազենի հարվածներով
2. Գլխավոր հարվածի ուղղության և ժամանակի քողարկում
3. Գլխավոր հարվածի ուղղումը հրամանատարական կետերին

4. Ավարայրի ճակատամարտը

Ավարայրի ճակատամարտ, Ավարայր գյուղի մոտ 451 թվականի մայիսի 26-ին ապստամբ հայկական ուժերի և պարսկական բանակի միջև տեղի ունեցած ճակատամարտ: Ավարայրի ճակատամարտը Սասանյան Պարսկաստանի դեմ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի բարձրակետն էր:Վարդան Մամիկոնյանիհրամանովհայոցզորքըհավաքվեց Այրարատում և արագորեն շարժվեց թշնամուն ընդառաջ: Սպարապետը ցանկանում էր ճակատամարտ տալ հայ-պարսկական սահմանում և կանխել երկրի ավերումը: Պարսիկների հսկայական բանակն ուժեղացված էր ընտիր հեծելազորով՝ «Մատյան գնդովե, ու մարտական փղերով: Պարսիկները շուտով մտան Վասպուրականի Արտազ գավառ և բանակ դրեցին Տղմուտ գետի աջ ափին՝ Ավարայրի դաշտում:

Մայիսի 25-ին հայկական բանակը մոտենում է հակառակորդի ամրացված ճամբարին և կանգ առնում գետի ձախ ափին: Մայիսի 26-ին շաբաթ առավոտյան Ավարայրի դաշտում հակառակորդներն ընդունում են մարտական դրություն; Սպարապետը դիմեց զորքին և ժողովրդինս

Չերկնչենք և չվախենանք հեթանոսների բազմությունից, իսկ եթե հասել է ժամանակը՝ մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, մահն ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չիսառնենք;Չգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը անմահություն;

ԱԱնհավասար մարտում հերոսաբար զոհվում է Վարդան Մամիկոնյանը: Ճակատամարտը 222արունակվում է մինչև օրվա վերջը: Հայկական զորքերը երեկոյան քաշվում են Տղմուտի ձախ ափը և նահանջում երկրի խորքը՝ պայքարը շարունակելու նպատակով: ԶԶոհվել էր սպարապետը, հայերը զգալի կորուստներ էին տվել: Հայերը չէին ջախջախվել, պպահպանել էին մարտական ոգին և լի էին պայքարը շարունակելու վճռականությամբ; ԱԱվարայրի ճակատամարտը կանխորոշեց հայ ժողովրդի պայքարի ելքը: Պարսկական ասարքունիքը ստիպված եղավ Մարզպանական Հայաստանից շուտով ետ կանչել իր զզորքերին, հրաժարվել հավատափոխության միջոցով հայերին ձուլելու ծրագրից և ճճանաչել նրանց ներքին ինքնավարությունը;

Այս ճակատամարտը հայկական բանակի մղած ամենաարյունալի ճակատամարտերից մեկն է: Նորագույն պատմությունը զոհերի քանակը ներկայացնում է՝ հայերինը 1036, հակառակորդինը 3544: Սակայն ճակատամարտի մասնակից Եղիշեն նշում է, որ այդ զոհերը թագավորական և նախարարական տներից են, իսկ զոհերի ընդհանուր քանակի մասին նա գրում է "... դիակների թիվն այնքան մեծ էր, որ նմանվում էր խորդուբորդ քարակույտերի":

"...Ավարայրի ճակատամարտը իր հետևանքներով հնար տվեց հայ ժողովրդին դիմանալ և պատրաստվել նոր ճակատամաչտերի Վահան Մամիկոնյանի ղեկավարությամբ, որը վերջացավ Նվարսակի դաշնագրությամբ, որով հայերը ստացան իրենց համար ավելի ձեռնտու իրավունքներ... Հայ ժողովուրդը պաշտպանել է ոչ միայն իր ֆիզիկական գոյությունը, այլև իր դարավոր կուլտուրան":

5. Սևանի ճակատամարտը

921 թ. Աշոտ Բ-ն իր փոքրաթիվ զորաջոկատով ամրացավ Սևանա կղզում: Արաբական զորքերի հրամանատար Բեշիրը փորձեց գրավել կղզին, սակայն Աշոտ Բ-ն մի մառախլապատ օր նավակներում տեղավորեց իր լավագույն ռազմիկներին և, դեռ ափ չհասած, հանկարծակի սկսեց ուժգնորեն նետահարել արաբներին:

Հայոց թագաժառանգի այդ անակնկալ համարձակ գործողությունը խուճապի մատնեց արաբներին: Խուճապահար նահանջող թշնամու վրա հարձակվեց Գևորգ իշխանի ջոկատը և մի նոր ջարդ տվեց նրան: Գևորգ իշխանի այդ համարձակ քայլն իր արտացոլումն է գտել Մուրացանի «Գևորգ Մարզպետունիե պատմավեպում;Սևանի փայլուն հաղթանակից հետո հայկական զորաբանակները Աշոտ Բ-ի և նրա եղբայր Աբասի գլխավորությամբ արաբներից ազատագրեց կենտրոնական Հայաստանի մեծ մասը:Այնուհետ նրանք հաղթանակ տարան նաև Թիֆլիսի արաբական ամիրայության նկատմամբ:Բյուզանդիան փորձում էր Հայաստանի և Վրաստանի ուժերը ուղղել արաբների դեմ: Ուստի, երբ Աշոտ Բ-ն 921թ. մեկնեց Կոստանդնուպոլիս, բյուզանդացիներն անմիջապես դաշինք կնքեցին նրա հետ:Արաբները, համոզվելով, որ Հայաստանը զենքի ուժով այլևս չեն կարող իրենց ենթարկել, ստիպված դիմեցին զիջումների, որպեսզի Հայոց թագավորությունը չանցնի Բյուզանդիայի կողմը: 922թ. խալիֆը Աշոտ Բ-ին թագ ուղարկեց և ճանաչեց նրան Հայաստանի շահնշահ, այսինքն՝ արքայից արքա: Դրանով արաբները ճանաչեցին Աշոտ Երկաթի գերակայությունը տեղական մյուս բոլոր արքայիկների նկատմամբ: Արքայական այս բարձր տիտղոսը Անիի Բագրատունիները կրեցին մինչև թագավորության անկումը:
Հայաստանի անկախության և Հայոց տերության պահպանման համար մղվող պայքարն ավարտվեց հայերի վերջնական հաղթանակով:

6. Հալիձորի ճակատամարտը

Օսմանցոց անթիվ-անհամար զորքը Սյունյաց աշխարհը մտավ եւ բոլոր կողմերից շրջապատեց Դավթի երկիրը՝ Ղափանի յոթնաբերդ գավառը: Բնակիչները խուճապի մատնվեցին, զորք ու զինվոր ցրվեցին: Դավիթը երեք հարյուր սպառազեն այրերով ամրացավ Հալիձորի մենաստանում, ուր կառուցել էր անառիկ ամրոցը:
1727 թ. մարտին, թշնամին գրոհեց բերդը: Վեց օր միմյանց դեմ կռվում էին. թուրքերի կողմից օրական մինչեւ չորս հարյուր զոհ էր լինում, իսկ հայերից՝ դիրքի անառիկության շնորհիվ, հազիվ մեկ կամ երկու հոգի:

Մխիթար սպարապետն ու Տեր Ավետիսը, երբ տեսան, որ ապրելու հույս չի մնում, խրախույս կարդացին եւ... 300 քաջեր դուրս գալով բերդից, ամեն մինը մի-մի Սասնա Դավիթ, ձայնեցին, մտան թուրքի զորքի մեջ: Երեք հարյուրը՝ յոթանասուն հազարի դեմ: Աջ ու ձախ կոտորելով՝ խուճապի մատնեցին անակնկալի եկած օսմանցուն եւ ահ ընկավ նրանց վրա Տիրոջից. ապշեցին, տկարացան, հուսալքվեցին եւ միմյանց ոտնատակ տալով՝ մեծ վայնասունով դիմեցին փախուստի: Եւ այն օրը օսմանցիների բանակից ընկավ տասներեք հազար զինվոր, իսկ հայերից շատ քչերը: Թուրքերը մարտի դաշտում թողեցին 148 դրոշակ, զենք ու զինամթերք, անթիվ ու անհամար վիրավորներ: Դավիթ Բեկի ու Մխիթարի անունն ու ահը տարածվեց ամբողջ Անդրկովկասում, Իրանում ու օսմանցոց երկրում:

7. Սարդարապատի ճակատամարտը

Մայիսի 22–29-ը Արագածի լանջերից մինչև Արաքս, Սարդարապատից մինչև Սևան գիշեր-ցերեկ անդադար դողանջել են բոլոր եկեղեցիների զանգերը: Ժողովուրդը զինվել և օգնության է հասել զորամասերին: Սարդարապատի զորախումբը, գնդապետ Դանիել բեկ Փիրումյանի հրամանատարությամբ, դիրքեր է գրավել Սարդարապատի ուղղությամբ հարձակվող թուրքական զորամասին դիմակայելու համար, իսկ 6-րդ հեծյալ և 2-րդ պարտիզանական գնդերին հանձնարարվել է սահմանապահ գումարտակի աջակցությամբ փակել Բաշ Ապարանից Երևան շարժվող թուրքական 9-րդ դիվիզիայի ճանապարհը: Թիկունքի և Երևանի պաշտպանությունը ղեկավարել է Արամ Մանուկյանը:

Սարդարապատի ճակատամարտին մասնակցել են հայ ժողովրդի բոլոր խավերի ներկայացուցիչները՝ անկախ քաղաքական համոզմունքներից, սեռից ու տարիքից: Ճակատամարտում լավագույնս դրսևորվել են հայկական ռազմարվեստի ավանդույթները: Սարդարապատի ճակատամարտի վայրում 1968 թ-ին կառուցվել է հերոսամարտին նվիրված հուշահամալիրը:

8. Բաշ Ապարանի ճակատամարտը

Թուրքական հրամանատարությունը Բաշ Ապարան (այժմ՝ ք. Ապարան) ուղարկած 9-րդ դիվիզիայով փորձել է հյուսիսից արշավել Երևան, անցնել Սարդարապատի շրջանում հակահարձակման անցած հայկական զորամասերի թիկունքը և նրան կտրել Երևանից: Այդ ծրագիրը խափանելու նպատակով հայկական հրամանատարությունը Սարդարապատի ճակատամարտից Դրոյի (Դրաստամատ Կանայան) գլխավորությամբ շտապ ուժեր (6 հզ. մարդ) է տեղափոխել Բաշ Ապարան: Մայիսի 24-ին Դրոյի զորաջոկատը մտել է Ալի Քուչակ (այժմ՝ Քուչակ)՝ դեպի Բաշ Ապարան արշավող թուրքերին դիմակայելու համար: Մայիսի 29-ին Բաշ Ապարանում ջախջախվել է հակառակորդի 2 գունդ և ոչնչացվել ծանր հրետանին: Թշնամին, մարտադաշտում թողնելով 200-ից ավելի սպանված և մեծաքանակ ռազմավար, հետ է մղվել Բաշ Ապարանից արևմուտք:

Ճակատամարտում հայկական զորամասերին մեծ աջակցություն են ցույց տվել նաև եզդի աշխարհազորայինները (1500 հեծյալ)՝ Ջհանգիր աղայի գլխավորությամբ: Բաշ Ապարանի ճակատամարտով կասեցվել է թուրքական զորքերի արշավանքը Երևան և Արարատյան դաշտ:

Բաշ Ապարանի ճակատամարտին նվիրված հուշակոթողի (1979 թ.) մոտ 2000 թ-ի մայիսի 28-ին վերաթաղվել է Դրոյի աճյունը:

9. Ղարաքիլիսայի ճակատամարտը

Ալեքսանդրապոլը գրավելուց հետո Ղարաքիլիսայի ուղղությամբ շարժվող թուրքական զորամասը մայիսի 20-ին գրավել է Ջաջուռը, Աղբուլաղը , Ղալթաղչին, մայիսի 21-ին՝ Վորոնցովկան (այժմ՝ ք. Տաշիր): Ջալալօղլիի (այժմ՝ ք. Ստեփանավան) մոտ մայիսի 21–22-ի մարտերից հետո Անդրանիկի ջոկատը կենտրոնացել է Դսեղ գյուղում, ապա շարժվել դեպի Դիլիջան: Հայկական զորքին օգնության են հասել Ղարաքիլիսայի շրջակա գյուղերի բնակիչները: Հայկական ուժերը հիմնական հարվածները թուրքերի գերակշիռ ուժերին հասցրել են Ղշլաղ (այժմ՝ Դարպաս) գյուղի մոտ, Բզովդալի (այժմ՝ Բազում)

մատույցներում և Մայմեխ լեռան լանջերին՝ թշնամուն հարկադրելով նահանջել դեպի Համամլու (այժմ՝ ք. Սպիտակ): Մարտերում աչքի են ընկել գնդապետներ Նիկոլայ Ղորղանյանի, Աթաբեկ բեյ Մամիկոնյանի զորամասերը, պորուչիկ Գարեգին Նժդեհը, հերոսաբար զոհված շտաբս կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանի հրետանավորները: Հայերը կրել են զգալի կորուստներ: Մեծ էին նաև թուրքերի կորուստները, սակայն համալրում ստանալով՝ նրանք անցել են հակահարձակման, և հայկական ուժերը հարկադրված նահանջել են Դիլիջան: Ղարաքիլիսայում և շրջակա գյուղերում թուրք ջարդարարները կոտորել են հայ բնակչությանը (շուրջ 5000 մարդ), ավերել բնակավայրերը և անցել Ղազախ:

10. Արցախյան ազատամարտ

1988 թվականից Ադրբեջանը սանձազերծեց Հայ-Ադրբեջանական պատերազմ: Լավ զինված ադրբեջանական բանակը, ջոկատներից սկսեցին լայնածավալ հարձակումները Հայ-ադրբեջանական սահմանի ամբողջ երկայնքով: Պատերազմի հորձանուտում հայերը միացյալ ուժերով ստեղծեցին հայոց ազգային բանակ, որը կազմում էր մոտ 20-25 հազար: Ադրբեջանի բանակը 75-80 հազար: Սակայն հայերը կարողացան հետ մղել հակառակորդի գրոհը և ազատագրել Արցախը: Ադրբեջանական բանակի նշանառված հարվածներին զոհ են գնում հազարավոր հայ խաղաղ բնակիչներ: Հայկական կողմը կորցրեց Արծվաշենը, Մարդակերտի, Մարտունիի, Շահումյանի շրջանների մի մասը:

Շահումյանի շրջանի բնակչության բռնի տեղահանություն «Օղակե գործողության ժամանակ

«Օղակե ռազմական գործողության ժամանակ ունեցած նախնական հաջողություններով ոգևորված՝ Ադրբեջանի ղեկավարությունն իր ենթակայության տակ դրված խորհրդային բանակի ստորաբաժանումների միջոցով շարունակել է մարտական գործողություններըՇահումյանի շրջանում: ՀՀ սահմանամերձ շրջաններում, Գետաշենի ենթաշրջանում և Շահումյանի շրջանում ինքնապաշտպանական կամավորական ջոկատների գործողությունները համակարգելու, անհրաժեշտ կադրեր պատրաստելու, նյութական, ռազմական և կազմակերպչական օժանդակություն ապահովելու,

ադրբեջանական ՄՀՆՋ-ականների ճնշմանը և հարձակումներին դիմագրավելու, մարզի պաշտպանությունը կազմակերպելու նպատակով 1990-ին ԼՂ Ազգային խորհրդի «Պե («Պաշտպանություն») ժամանակավոր խմբի հիմքի վրա կազմավորվել է Ինքնապաշտպանության ընդհատակյա կոմիտե:

Հաշվի առնելով Արկադի Տեր-Թադևոսյանի, ռազմական գործողությունների ղեկավարման ընթացքում ձեռք բերած հեղինակությունը՝ կաղրային սպայի ու աֆղանական պատերազմի հարուստ փորձառությունը և մինչ այդ ԻՊՈ հրամանատարի պարտականությունների հաջող կատարումը, Արցախի Հանրապետության ԳԽ Նախագահությունը 1992-ի մարտի 4-ին նրան նշանակել է Արցախի ԻՊՈ հրամանատար:

Շուշիի ազատագրում

Ռազմական գործողության մանրակրկիտ նախապատրաստության, հմուտ ղեկավարման, բոլոր աստիճանների հրամանատարների հնարամիտ փոխհամագործակցության, հայ ազատամարտիկների վճռական գործողությունների շնորհիվ երկու օրում հաջողվել է ճնշել հակառակորդի դիմադրությունը և ազատագրել ռազմավարական տեսակետից կարևոր Շուշի քաղաքը: Շուշիի ազատագրմամբ հնարավոր է դարձել նաև Լաչինի ռազմագործողությունը՝ Արցախի շրջափակման օղակի ճեղքումը (տես Լաչինի մարդասիրական միջանցքի բացումը):

Շուշիի ազատագրումը վերջնականապես հողմացրիվ է արել թվաքանակով ու միջոցներով գերակշռող հակառակորդին սեփական ուժերով հաղթելու անհնարինության մասին առասպելը: Մյուս կողմից, այն բարոյահոգեբանական խորտակիչ հարված է հասցրել հակառակորդին, որն այդպես էլ հետագա մարտական գործողությունների ողջ ընթացքում չի կարողացել հաղթահարել պարտվածի բարդույթը:

Զինադադարի հաստատում

Ակնհայտ էր, որ ստեղծված իրավիճակում ադրբեջանական կողմն այլևս չէր կարող իր թվական ու ռազմատեխնիկական գերակշռությամբ ռազմաճակատում բեկում մտցնել: Հետևաբար, հասունացել էր զինադադարի հաստատման պահը, ինչն էլ ճիշտ ժամանակին գնահատեց Ռուսաստանը: Վերջինս, խնդիր ունենալով չեզոքացնել մի շարք երկրների շահագրգիռ միջամտության ու իր «ազդեցության գոտիե ներթափանցման փորձերը, առանց

նախապայմանների ու քաղաքական հարցերի արծարծման վճռական քայլեր ձեռնարկեց հրադադար հաստատելու ուղղությամբ: Դրանով Ռուսաստանն առաջին հերթին հետամտում էր իր միջազգային վարկանիշի ու Անդրկովկասում ազդեցության վերականգնման քաղաքական խ: Ռուսաստանի միջնորդությամբ կրակի դադարեցման վերաբերյալ համաձայնագիրը ՀՀ, Արցախի և ԱՀ պաշտպանության գերատեսչությունները ստորագրել են մայիսի 11-ին: Համաձայնագիրն ուժի մեջ է մտել մայիսի 12-ին:

11. Ապրիլյան քառօրյա պատերազմ

«Ապրիլյան չորսօրյա պատերազմի դրդապատճառների քաղաքական ասպեկտները տեւական ժամանակ դեռ կքննարկվեն, անշուշտ, առաջ կքաշվեն բազում աշխարհաքաղաքական, տնտեսական եւ այլ դրդապատճառներ: Սակայն փաստն այն է, որ Ադրբեջանը մի քանի հանգամանք հստակորեն հաշվարկել էր: Անցած տարիների ընթացքում Ադրբեջանը ձեռք էր բերել մեծաքանակ նորագույն զինատեսակներ, դրանք իրենց մեծ վստահություն էին ներշնչել, ընդհուպ, որ դրանք կարող են իրենց հաղթանակ ապահովել: Միաժամանակ նրանք գիտեին, որ հայկական կողմը եւս բավականին ձեռքբերումներ ունի, սակայն դրանց զգալի մասը դեռեւս ճանապարհին է: Եթե սրան հավելենք, որ ադրբեջանական բանակի ծախսերը շեշտակիորեն կրճատվել էին, ապա կարելի է ենթադրել, որ, ըստ իրավիճակի, ճիշտ ժամանակն է փորձել բլից կրիգ (արագ պատերազմ) անել:

Սակայն նրանք չեին հաշվարկել մի բան, որ իրենց դեմ հայ զինվորն է կանգնած, որ հայ զինվորի կողքին կանգնած է մի ժողովուրդ որը Ավարայր ու Սարդարապատ է տեսել, ժողովուրդ որը Շուշի է գրավել իրենից տասնյակ անգամ գերազանցող ուժերից, որ ՈՒրֆանյանի նման վաշտի հրամանատար ու Աբաջյանի նման զինվորներ ունենք;Նրանք իրենց պատկերացրած արագ պատերազմում չեին էլ մտածում որ հայ զինվորը նռնականետով ուղղաթիռ իսկ որսորդական հրացանով անօդաչու սարք է խփելու;Հայ զինվորը նոր մարտավարություն մտցրեց պատերազմների պատմության մեջ՝ 18-20 տարեկան տղաները հետ մղեցին ու պաշտպանեցին իրենց դիրքերը իրենցից տասնապատիկ անգամ գերազանցող ուժերին որոնք հատուկ ջոկատայիններ էին, տարբեր

երկրներում փորձ ձեռք բերած, Սիրիական ու Աղվանական պատերազմների բովով անցած 30-40 տարեկան զինվորականներ;

Հարվածող խմբավորումների առաջին շարակազմում կիրառվել են միայն հատուկ նշանակության ուժեր, այդ թվում՝ փորձ՝ օդային դեսանտ իջեցնել մարտավարական խորքում: Ապրիլի 2-ի առավոտյան խոցված ուղղաթիռը հենց այս փորձի ժամանակ է խոցվել: Միայն այս ուղղությամբ շրջափակման մեջ ոչնչացվել է ադրբեջանական հատուկ նշանակության ջոկատի առնվազն 30 զինվոր: Հայկական ստորաբաժանումներին հանկարծակիի բերել չկարողանալով՝ հակառակորդը դիմել է ծայրահեղ մեթոդի, այսպես ասած, պլան «Բե-ի՝ հրետանային ինտենսիվ կրակով գոնե առաջին դիրքերը վերցնելու մարտավարությանը: Իհարկե, նման ինտենսիվ կրակով մի քանի տեղում հակառակորդին հաջողվել է ճեղքել առաջին բնագիծը, սակայն դրանով էլ տապալել է ամբողջ օպերացիան.: Քիչ-քիչ մարտի մեջ են մտցվում հրանետներ, ծանր հրետանի եւ այլն, սակայն քանի որ ամեն ինչ վատ էր պլանավորված, անգամ նորագույն համակարգերը, ինչպիսիք են մարտական ԱԹՍ-ները, կիրառվում են ոչ համակարգային, այլ անհատական, տալով ցածր արդյունք: Հատկապես զարմանալի էր «Սմերչ համակարգերի բացարձակ անհաջող կիրառությունը Կայծակնային գործողության տապալումից հետո Ադրբեջանը անցավ հյուծման կռվի: Շուրջ երկու օր տեւած հյուծման մարտերից հետո Ադրբեջանը, սպառելով ստեղծված այդ գորախմբերի հիմնական ներուժը, գնաց հրադադարի: Կրակի դադարեցման պայմանավորվածության պահի դրությամբ ադրբեջանական կողմը կորցրել էր 24 տանկ, 1 SOU-1Ա հրանետ, 1 ՀՄՄ, 6 զրահապատ մեքենա, 1 ինժեներական մեքենա, 1 «Գրադ ՀԿՌՀ, 2 ուղղաթիռ եւ 12 անօդաչու թռչող սարք: Հատուկ նշենք, որ հայկական կողմը կորցրել է մեկ ԱԹՍ: Փաստորեն, ապրիլի 5-ին ադրբեջանական ԶՈՒ-ն, արցախյան բանակի երկու վաշտային ոչ լիարժեք հենակետ գրավելու համար կիրառելով 2-3 անգամ բարձր մակարդակի, մինչեւ անգամ 10 անգամ գերազանցող ուժեր, չի կարողացել լուծել մարտավարական խնդիր եւ ստիպված է եղել դիմակայել հայկական ուժերի հակագրոհներին:

Հայկական բանակի գործողությունների առանձնահատկությունները.

44 օրյա պատերազմ

Հայկական բանակը ամենամեծ փորձության ենթարկվեց 2020թ. սեպտեմբերի 27-ին, երբ ադրբեջանաթուրքական տանդեմը Արցախի սահմանի ողջ երկայնքով լայնածավալ հարձակում սկսեց: Պատերազմի առաջին օրերից պարզ դարձավ որ Հայկական բանակ և Արցախ պաշտպանական բանակը կռվում է թուրքական բանակի դեմ՝ Ադրբեջանի անվան տակ; Պատերազմին մասնակցում էր Սիրիայից բերված վարձկաններ և ահաբեկիչներ՝ թուրքական բանակի սպայական կազմի հրամանատարությամբ, օդուժի ժամանակակից տեխնիկայով:

Հայկական բանակը ծանր կորուստների գնով հրադադարի մասին համաձայնագիր ստորագրեց 2020թ. նոյեմբերի 9-ին:

Չնայած հայ զինվորի գործած հերոսական դրվագների առանձին դեպքերում հարձակվող կողմին ջախջախիչ հարված տարան և հսկայական մարդկային զոհերի և զինտեխնիկայի կորստի Ադրբեջանաթուրքական տանդեմը թելադրեց իր պայմաններտ հրադադարի հաստատման համար:

44 օրյա պատերազմի դառը պարտությունը չէր լինի եթե մենք դասեր քաղած լինեինք մեր հազարամյա պատմությունից:

1. Որքան էլ ցավալի է մենք պարտվեցինք մեր իմացության բացակայությունից:
2. Մեր զինվորը իր հայրենիքը ավելի շատ է սիրում քան թիկունքում գտնվողը:
3. Աշխարհը չգնահատեց հայ ժողովրդի ժողովրդավարությունը:
4. Հայ ժողովուրդը պայքարում էր Ադրբեջանի անվան տակ գործող ՆԱՏՕ-ի ամենահզոր բանակներից մեկի դեմ, որի շարքերում էին Սիրիայի վարձկանները և ահաբեկիչները:
5. Քառօրյա պատերազմից հետո մեր զեկավարները դասեր չքաղեցին և ոչինչ չավելացրեց բանակում; Մենք կռվում էինք 80-ականի տեխնիկայով, գումարած ներքին դժգոհությունները:
6. Բանակը չուներ 2-րդ պաշտպանական գիծ;
7. Այսօրվանից պետք է մտածել որ մի օր կարող է ռուս խաղաղապահը դուրս գա տարածաշրջանից:
8. Պետք է պատրաստվել հաջորդ պատերազմին:
9. Հույսներս գնենք մեր վրա ոչ թե ՄԱԿ, ԵՎՐՈԽՈՐՀՈՒՐԴ, ՀԱՊԿ, կարմիր խաչ... նրանց ուժը տեսանք...

Վերջաբան

Ռազմարվեստի հայ պատմության մեր ուսումնասիրած ճակատամարտերը, որոնք իրարից հեռու են հազարամյակներով և դարերով, սակայն մարտավարության ընդհանրությունը նույնն է

- Մարտական խնդիրները վճռական են, հարձակողական
- Մարտավարությունը՝ անսպասելի և բազմազան
- Գործողությունները՝ սրընթաց, անկասելի
- Ճակատամարտի վայրի ճիշտ ընտրություն
- Նպաստավոր պայմանների ապահովում
- Հետախուզության մշտական անցկացում
- Զորքերի բարձր բարոյահոգեբանական ոգու առկայություն